

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ ՈՐ Ի ՆՄԱ ՅԱԻՐԻՆԵԱԼ ԿԱՐԳԱՅ

ՅՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ

Կարապետ Եպիսկոպոս, 1913ին, Շոգա-
կաթ Հայագիտական Ժողովածուին մէջ,
էջ 131-136, հրատարակած է այս շահեկան
գրութեամբը, առնելով Էջմիածնի Հ. 943=
1525 ձեռագրէն, համեմատուած, նախ
վանքի Հ. 2261=2244 ձեռագրին հետ: Այդ
հրատարակութիւնը ունի ոչ անկտրելոյ
թերութիւններ, որոնք կը վերաբերին մեծ
մասով իրրեւ բնագիր առնուած օրինակին:
Մինչդեռ, ինչպէս կը ծանօթագրէ գիտնա-
կան Հրատարակիչը, «Հ. 2261=2244 ձե-
ռագրի օրինակն աւելի ընտիր է և նախ-
նական», և կ'աւելցնէ, «բայց այն թողինք
ամբողջական հրատարակութեան համար»
(Շոգակաթ, էջ 136):

Ս. Աթոռոյ Թ. 1 Գ պատուական ծառ-
քնախրին մէջ հանդիպեցանք այս գրու-
թեան, առանց հեղինակի անունին, և հա-
մեմատելով Կարապետ Եպիսկոպոսի հրա-
տարակածին հետ, տեսնաք թէ մեր օրի-
նակը շատ մը տեղեր կը սրբագրէ տպագ-
րւածը, և յաճախ կը համաձայնի Հ.
2244 ձեռագրին հետ, ընդդէմ Հ. 1525ին:
Ուստի պատշաճ համարեցինք Սիւնի հա-
մար պատրաստել նոր հրատարակութիւն
մը, իրրեւ բնագիր առնելով մեր ծառքնա-
խրը և համեմատելով Կարապետ Եպիսկո-
պոսի լոյս ընծայած օրինակին հետ:

Մեր օրինակը կը նշանագրենք Ա. (= Զեռ. Ս. Յ. Թ. 1Գ). Բ կը ներկայացնէ Շո-
գակաթի բնագիրը (= Զեռ. Ս. Էջմիածնի,
Հ. 1525). Իսկ Գ տառը կը ցուցնէ Շոգա-
կաթի ստորին լուսանցքին տրուած տարբե-
րակները (= Զեռ. Ս. Էջմիածնի, Հ.
2244):

Երանելին Պաւղոս գրէ Երրանցեւոյն
այսպէս ասելով. Ստուեր Հանդերձեւոյն
բարեաց ունէին աւրէնքն, և առաւառ աւ-
րինակաւ պաշտէին երկնաւորացն: Եւ ապա
ասէ զխորանէն և որոց ի նմա. Մարմնոյ,
ասելով, արդարութիւնքն, որ մինչև ի
ժամանակս ուղղութեանն(1): Եւ յետ այսո-
րիկ զՔրիստոս քահանայապետ ասէ անձե-
ռագործ խորանաւ, այս է՝ ոչ իրրեւ յարա-
բաճոց մարդ որ ի մարդկանէ, այլ բանն որդի
Աստուծոյ եղեալ(2) մարդ ի սուրբ Աս-
տուածածնէ կուսէն Մարիամա, առնելով ի
նմանէ մարմին և հոգի և միտ և զամե-
նայն ինչ որ է ի մարդն, բայց ի մեղաց:
Եւ իւրով արեամբն ասէ եմուտ ի որբու-
թիւնն՝ յախտենականս տուեալ մեզ զփր-
կութիւն(3): Եւ ապա յիշէ զաւրինաւորոն,
և զարձեալ ասէ. Հարկ էր աւրինաւորա-
ցն(4) այնպիսեւ սրբել, և բուն իսկ
երկնաւորաց առաւել: Եւս պատարադաւք
բան զնոյն: Չայս զբրիտոնէիցն(5) ասէ:
Եւ յետ այնորիկ ասէ. Ոչ եթէ ի ձեռագործ
սրբութիւնս եմուտ Քրիստոս(6) յաւրինակ
ճշմարտութեանն(7), այլ ի բուն իսկ յեր-

(1) Որ մինչև ի ժամանակս ուղղութեանն,
Զուրի Ա: Ի ժամանակին ուղղութիւնն, Բ:

(2) Իջեալ, Բ:

(3) Զուրի, Բ:

(4) աւրինակաց երկնաւորաց, Բ: աւրինաւ-
որաց երկնաւորաց, Գ:

(5) զբրիտոնէից կարգաց, Բ:

(6) Յիսուս, Ա:

(7) ճշմարիտ քահանայութեանն, Ա:

կինս, յանդիման լինել երեսացն Աստուծոյ փասն մեր:

Ահաւասիկ սիրելի իմ, հրաժարեա ի ձեռագործ սրբութենէ: Այլ յերկինս առաց, այս է եկեղեցի. քանզի ի սմա հացին որ մատուցանի(8) յանդիման Աստուծոյ Հաւր, երաժակաւն դոհութեան, որ է մարմին եւ արիւն Քրիստոսի Աստուծոյ, տրուալ լինի փրկութիւն՝ (9) սրբութեամբ ճաշակողացն, սրդեղրութեան հոգոյն շնորհացն արժանացեալ(10):

Եւ յետ այլոց դարձեալ ի նմին թղթի յայտնագոյն եւս արտայայտէ զեկեղեցւոյ խորհրդոյ փեռեկումն առ հաւատացեալսն, հրաժարականարար պատմութեամբ զարինացն ասէ. Ոչ էք մատուցեալ առ լեռան շաւափելի, որ հաւրն փռեալ էր: Եւ ապա մի ըստ միով (11) նոյնպէս հրաժարելով(12), եւ հաւանականարար(13) պատմութեամբ ըստ եկեղեցւոյ ասէ. Մատուցեալ էք ի Սիոն Լեռան եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ յերուսաղէմ յերկինս, եւ ի բիրաւոր բանակս հրեշտակաց, եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ հոգիս արդարոց կատարելոց, եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս:

Ահա քաջերեւելագոյն(14) արտայայտեաց սուրբ առաքեալն զեկեղեցւոյ վերերեւութիւն(15), ոչ երկիր լինել՝ այլ երկինք, ոչ երկրային քաղաք՝ այլ վերինն երուսաղէմ, ոչ երկրային տաճար՝ այլ երկնային առաքատ, ոչ իրբեւ ստացականաց հոգեղինաց դասակցութիւն՝ այլ որպէս բանակաց հոգեղինաց եւ որոց ըստ նոցին:

(8) մատուցանէ, Ա:

(9) ի փրկութիւն, ԱԲ:

(10) սրդեղրութեան շնորհաց Հոգւոյն Սրբոյ արժանի եղելոց, Բ:

(11) եւ ապա ըստ միովէցն, Բ: զաստի միոջէն, Գ:

(12) երամայելով, Ա:

(13) հաւանական, Բ:

(14) Քաջերեւագոյն, Բ: յայտնագոյն, Գ:

(15) զերեւութիւն, Ա:

(16) սրբոց առաքելոց, ԱԲ:

Եւ արդ թուի ինձ լինել, ըստ սրբոյ առաքելոյն(16) ակնարկութեան, կարգ քրիստոնէութեան աստուածային եւ երկնային յաւերնուածով(17) կարգացն անցելոցն եւ ներկայիս եւ ապառնեաց ամանակացն ցոյցք ի ստորինս՝ (18) վերերեւելով զմեզ(19) յզգայեացս եւ յերկրայնոցս յիմանալիսն եւ յերկնայինսն(20), միշտ տեսանելով զանդլեալ կարգան եւ զհանդերձեալն լինելոյ(21) յաւերնուածոց պատրաստութիւն:

Եւ արդ է եկեղեցի հարսն Քրիստոսի, զի զայս զեկոյց մեզ(22) մեծն ի ծնունդս կանանց՝ ասէ. Ոյր հարսն է, նայ է փեսայ: Փեսայ Քրիստոս է, ըստ խրում(23) անսուտ բանին, եւ հարսն է եկեղեցի: Սոյնպէս եւ երկինք կոչին եւ երկնից երկինք, եւ երկնային տոպրաստ, եւ հարսնարան, եւ վերին երուսաղէմ: Այսպիսի անուամբք կոչի եկեղեցի, զորոյ զցուցանակն(24) ունի յայտնապէս:

Բայց երկնիցս մեզ երկուք ցուցանին(25) իմացուածք(26), այլ(27) զի սկզբանէն, զանցեալն, զայժմուս, զներկայս, եւ այլ(28) զապառնին՝ զհանդերձեալն(29) լինելոյ:

Իսկ եկեղեցի երկու խորանաւքս, թուի ինձ զայժմուս եւ զհանդերձեալն լինելոյ: Իսկ յիսկզբանէն մինչեւ ցապառնին մեզ այսպէս ցուցանէ պատմութիւնն:

Երկուք լինելն խորան, որ ասին երկինք, ի միումն ինքն իսկ(30) սուրբ երբորդութիւնն, եւ յերկրորդումն անմարմնական

(17) յաւերնուածոց, Բ:

(18) անցելոցն... ի ստորինս, Զուհի ԱԲ:

(19) Զուհի Ա:

(20) յիմանալի երուսաղէմ ընդ երկնայինսն, Ա:

(21) զհանդերձեալսն լինելոյ, Բ:

(22) զեկեղեցւոյ, Ա: զեկուցանէ, Բ:

(23) խրում, Ա:

(24) եւ ցուցականն, Բ:

(25) Բայց երկնի երկու են, Բ:

(26) իմացուածս, ԱԳ: յաւերնուածք, Բ:

(27) Զուհի, Ա:

(28) Զուհի, ԱԲ:

(29) զապառնիսն՝ զհանդերձեալսն, Բ:

(30) ի միումն ինքնին, Ա: Ի միումն իսկ, Բ:

դասքն հրեշտակաց, և որք վերագոյն քան զնոսա: Երկու անջրպետք վարադուրիցն⁽³¹⁾ խմանին, միայն՝ հրեղինաւն սուրբ երրորդութիւնն ծածկի յանմարմնոցն, և երկրորդն՝ ջրեղինաւն, անմարմին զաւրութիւնքն ի մարմնականաց: Զի յաղագս այնորիկ ոմն ի կատարեւազունից սուրբ վարդապետացն այսպէս իմաստասիրեաց յաղագս սուրբ երրորդութեանն, ասէ. Միայնակ ի սուրբ սրբոցն ի ներքս շրջի⁽³²⁾, իսկ զարարածս ամենայն արտաքս Եթող, զոմն առաջնոմն և զոմն երկրորդոմն արգելով վարադուրաւն. առաջնոմն զերկնայինն՝ զհրեշտակականն յաստուածութենէն, և երկրորդաւն զմեզ յերկնայնոցն:

Բայց որպէս սուրբ առաքեալն ակնարկեաց, սուրբ Եկեղեցի երկրորդ խորանաւն Հանդերձելոյ երկնիցն է նմանութիւն. զի այժմ ոչ որ առ սուրբ երրորդութիւնն իմանի, բայց յայսպէս յանմանն արժանաւորքն ընդ նմա լինելոց են, որպէս որդին Աստուծոյ ծանուց մեզ յաղթան իւրում առ Հայր վասն ամենայն Հաւատացելոց արժանաւորաց, ասէ. Որպէս դու, Հայր, յիս և ևս ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն: Եւ յետ սակաւուց ասէ. Ես ի նոսա և զու յիս, զի Եղիցին կատարեալք ի մի: Եւ զարձեալ, ասէ վասն ամենայն սրբոց առ Հայր. Կամիմ, զի ուր եմն իցեմ, և նոքա անդ իցեն, զի յամենայն ժամ զփառսն իմ տեսանիցեն:

Զսոյն և սուրբ առաքեալն ասէ առ Հաւատացեալսն. Քանզի մեռարուք և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի. իսկ յորժամ Քրիստոս⁽³³⁾ յայնչեացի կեանքն ձեռ, յայնժամ և զուք ընդ նմա յայնչեալք փառօք: Եւ այլուր ասէ. Եթէ չարչարանայրն կցորդ լինիցիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք: Եւ զարձեալ ասէ. Եթէ համբերեմք՝ ընդ նմին և թաղաւորեցուք⁽³⁴⁾:

Զսոյն և սուրբն Գրիգոր յայտնէ վասն արդարոցն, եթէ աստուածեղէն փառացն լինելոց են հաղորդք, ասէ, յորժամ յերկնից ծաղեալ⁽³⁵⁾ փառաւ Հաւր զայնչէ Քրիստոս⁽³⁶⁾ առաջի ամենայն հրեշտակազունդ զաւրուն⁽³⁷⁾, զձեռանէ առեալ զիւրոց սիրելեաց, առ ինքն⁽³⁸⁾ հանեալ տանիցի յիւր աստուածեղէն բնակութիւնն, յանդրաւական կեանսն վայելեցուցանէ:

Ահա ցուցաւ եթէ արժանաւոր արդարքն ընդ աստուածութեանն են լինելոց ի հանդերձելումն յաւիտենին:

Իսկ սուրբ Եկեղեցի երկրորդ խորանաւն Հանդերձելոյ երկնի է նմանութիւն, ուր ամենասուրբ երրորդութիւնն է արժանաւորաւք որպէս ահա ցուցաւ:

Իսկ սուրբ սեղանն սրբոյ երրորդութեանն ծանուցանէ մեզ միասնականութիւնն, որպէս սուրբն Սահակ ուսուցանէ⁽³⁹⁾ տեսլեամբն:

Իսկ ծածկեալն զկեստիւք արժանաւորաւք՝ այս ծածկեալ խորհուրդ ըստ ինքեան արժանի սուրբ երրորդութեանն, որ և առ ցուցաւ ի տեսլեան⁽⁴⁰⁾ սրբոյն Սահակա:

Իսկ պսակն՝ այս անդուզական պատիւ սուրբ երրորդութեանն, որպէս սուրբն Գրիգոր ասէ. մի պսակ սուրբ երրորդութեանն⁽⁴¹⁾:

Իսկ նուիրանոցքն արժաթիւք, սպասու⁽⁴²⁾ սրբոյ սեղանոյն, այս բանք Տեառն, ընտրեալ և փորձեալ որպէս զարժաթ, որպէս ասէ կանխաւ մարգարէն, և յետոյ սուրբն Սահակ ուսուցանէ:

Իսկ խնկանոցն զսուրբ Աստուածածնին ունի զնմանութիւն, որպէս և սուրբն Գրիգոր զխնկանոցն⁽⁴³⁾ յաւիտեան սուրբ կուսեն

(31) վերագումիցն, Ա:

(32) Որպէս ասէ Աստուածաբան. եթէ միայնակ ի սուրբ սրբոցն շրջի, Գ:

(33) Չուեք Ա:

(34) Բաղաւորեմք, Ա:

(35) ծաղեացի, Ա:

(36) Չուեք Բ:

(37) գաւրօք, Ա:

(38) այսիմքն, Բ:

(39) ծանուցանէ, Ա:

(40) ի սեղանն, Ա:

(41) որպէս... երրորդութեանն, Չուեք Բ:

(42) Չուեք, Բ:

(43) Չուեք Բ:

Մարիամու ասաց. ասէ, Որպէս նա լի էր հոտով սրբութեան(44), այնպէս եւ սա հոգւոյն սրբով եւ զօրութեամբ. Բարձր- յոյն:

Իսկ հրատու նուիրանոցն(45) թուի ինձ զհրեշտակապետին բերել զնմանութիւն առ սուրբ կոյսն աւետարանութեամբ(46):

Իսկ բուրումն անուշահոտ խնկոցն, աշա- յարինացն մեղ իմացեալ լիցի. քանզի անդ մատուցումն խնկոցն(47) հաշտութիւն(48) Աստուծոյ առ մարդիկ ցուցանէր(49): Իսկ(50) հաշտութիւն առ Աստուած՝ զմահն Քրիստոսի ասաց Առաքեալ. Հաշտեցաք, ա- տէ, ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նո- րոյ: Զսոյն եւ Աւրհնութիւն Աւրհնութեան- ցին նշանակէ՝ խնկանոց զմահն Քրիստոսի լինել, ասէ, նարդոս ետ զհոտ իւր, այս է մահն փրկչին Տն. ամենայնի: Եւ զարձեալ ասէ. Իջի ես ի պարտէզ խնկոց կթել զմուսս, այս է թաղումն Քրիստոսի: Եւ զի ոչ այլ ումեք այլ քահանայական դասուն է իշ- խանութիւն զայս ընծայս մատուցանել Աս- տուծոյ, այսուիկ եցոյց համանման լինել քահանային(51) հրեշտակապետին, որ սո- փաւ աղղկեալ սրբոյ Կուսին Մարիամու ա- վետարանութիւնն: Իսկ ի նմանէ մարմնա- նալովն ամենայն արարածոց եղև հաշտա- րար Քրիստոս արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի ի նոյն(52):

Իսկ բեմին վերամբարձութիւնն ցուցանէ յամենայն աստուածային ուղղութիւնսն

յերկրէ ընծայեալս բարձր եւ կանգուն զհա- ւատոյ դաւանութիւն համարաութեան, ո- րով վերանան արգարքն ի ծանրութենէ աշ- խարհիս կենացն, ի թեթեւութիւն երկնեց բնակութեանն:

Իսկ վարպետն անջրպետող զերկին ցուցանէ զատուցանել, զոր ինքն միայն զիտէ սուրբ երրորդութիւնն, զարժանիս առ ինքեան(53) բնակութեանն:

Իսկ լապտերացն հանապազօրգութիւնն ցուցանէ զմշտնջնաւոր յոյն եւ զարդա- րոցն պայծառութիւնն(54):

Իսկ խորհրդանոցքն որ յաջմէ եւ յահե- կէ(55), ցուցանէ զեկեղեցւոյ սպասուց եւ պատարագաց ընծայս, եւ զսուրս ողոր- մութեան առ սղքասոս եւ տնանկս, որ եւ(56) ի դանձանակս ժողովեալ բարեգործու- թիւնքն յերկինս պահին, առ Հաւրն հաւա- տոց, րոտ Փրկչին Բանին որ ասէ. Գանձե- ցէք ձեզ զանձս յերկինս:

Իսկ աւաղանն, այս մշտածին որովայն հարսինն Քրիստոսի է, որ է եկեղեցի: Իսկ յաջմէ զմեղ, եւ յահեկէ նորին հարսինն Քր- իստոսի. զի մատուցումն ի մէնջ յաջմէ է, զդասուն կայան խորհեալ է մկրտելոյն եւ որդի Աստուծոյ լինել Հոգւոյն շնորհաց: Իսկ յահեկէ նորին ծնողի, զի զկուղեցեալն նախ՝ մերժէ ի դասուն կայանէ(57) եւ նորին պետութեան զյխաւորի, եւ ապա(58) մա- տուցանէ աջակողման դասուն արժանեաց հօրն, եւ որոց ընդ նմա համապատիւր՝ Որդւոյն եւ սուրբ Հոգւոյն, եւ ապա նոցին անուամբք ծնեալք ջրով եւ հոգւով ընծաւ՝ որդեկրութեան անուամբք ժառանգս Աս- տուծոյ լինել: Իսկ զջրով եւ զհոգւով ծո-

(44) Անուշաբան, Ա:

(45) Անուիրանոցն, Բ:

(46) աւետարանութեան, Բ:

(47) այս յարիմացն... մատուցումն խնկոցն,

Զուեհ Բ:

(48) անոյշութիւն, Բ:

(49) ցուցանիւր, Բ:

(50) Կարապետ Եպս. Ժամօրագրած է. «Շարու- ճակութիւնը պակասում է 2261 — 2244 ձե- ուգրում, մի բերք ընկած լինելու պատճառով» (Շոգակաթ, էջ 134):

(51) Եցոյց զիրամանն մեամ լինել, Ա:

(52) Զուեհ Բ:

(53) իմքն, Բ:

(54) գմշտընջնալոյս արդարոցն պայծառու- րիւնս, Բ:

(55) Իսկ խորհրդանոցն յաջմէ ցուցանէ, Բ:

(56) իրքեւ, Բ:

(57) Ի ձախու կողմանէն, Բ:

(58) Կարապետ Եպս. կը ծանօթագրէ. «2261 — 2244 այս բառով շարունակում է» (նոյն, ամբ):

նունդն աւագանին՝ դայս սուրբն Գրիգոր ուսուցանէ, ասէ. Զուրբն վերինք մածեալք բնակութիւնք են Հրեշտակաց: Արդ դայս Զուրս իբրեւ դայն Զուրսն արար, զի ամենեքին Հոգւով ի Զուրցն նորոգեալ Հրեշտակացին, եւ նոյն Հոգի ի Զրոյն զամենեւեան յորդեգրութիւն մատուցանէ (59):

Իսկ յարեւելս ունել (60) զգիր շինուածոյ եկեղեցւոյ Հարսինն Քրիստոսի, այս յարեւելից սպասել զայստեանն փեսային, ըստ ինքեան Փրկչին բանին, որ ասէ. Զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ ի մուտս արեւու, ասինպէս եղիցի զայլուստ Որդւոյ Մարդոյ: Զնոյն եւ երեւիս մարդարէ ակնարկեաց յառաջագոյն, Համանունս ունելով (61) Երուսաղէմի՝ եղական (62) անուամբ զամենայն եկեղեցիս Քրիստոսի, ասէ. Արի երուսաղէմ եւ Հաւեաց ընդ արեւելս եւ տես զեկեալ փրկութիւն քո յարեւելից. եւ այս թէպէտեւ ի դարձ զերութեանն Բարեկոնի նշանակ է, այլ ստոյգ ի միւս անգամ զայլուստն (63) փրկչին իմանի, փրկելով զԺողովուրդ եկեղեցւոյ ի զերութենէ մահու եւ ապականութեան (64):

Իսկ ազգարարութեան (65) ժամուցն մեզ Հնչման լսումնն, այս Հրեշտակական փոշոյն զոչման (66) լսումն իմանի: Իսկ (67) սորին թողուլ զմարմնոյ ջան ի վաստակոց (68) եւ միարան յեկեղեցին (69) Հասանել, եւ անդ կատարել զպաշտանն (70):

Ահա այս արշարեւ յերկրէ եւ յերկրայնոցս զմեզ Գերթելով յերկինս եւ առ երկնայինն զմեզ մերձեցուցանէ, որպէս ի Հարիւրերոր (71) երեսներորդ առաջներորդ ազգմասին մեզ զեկուցանէ Հոգեհոգւոյն թիւնն. քանզի անդ ոչ տալ քուն աչաց ասէ, եւ ոչ նինջ արդեւանաց, եւ ոչ հանդիստ իւրանա[ն]ց (72), մինչեւ գտանել զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ. եւ տեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ (73) երկինք են, որ մեզ յերկրի եկեղեցիս ասացաւ՝ առական երկնից արինակեալ (74):

Իսկ զատումն պաշտանէիցն, դայս յառաջակայքն մեզ նորին սաղմոսի ուսուցանեն (75). քանզի առ եկեղեցի (76) ասէ. Քահանայք քո զեկեցիցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծացեն: Իսկ պաշտանեայք սեղանոյն, այս քահանայիցն ըստ սաղմոսին (77) զարդարութիւն զպնտւլն, որ զասակցին ընդ Հրեշտակս:

Իսկ Հայրապետն, որ նա (78) ինքն է զլուսիս եպիսկոպոսաց, միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, այս արինակ է կենարարին, որպէս սրբոյն Գրիգորի ի տեսիւանն ասացաւ, ասէ. Քահանայապետութիւնն արինակ է Աստուծոյ պատկերին, մարմնագելոյ Որդւոյն Աստուծոյ:

Իսկ եպիսկոպոսք եւ քահանայք եւ սար-

(59) Տես Աղարամգեղոս. Վեցնտիկ. 1930. Հտ. ԽԶ. էջ 304:

(60) ունելով, Ա: առնելով, Բ:

(61) առնելով, Բ:

(62) էական, Ա:

(63) զայստեան, Ա:

(64) յարութեան, Բ:

(65) զարդարութեան, Բ:

(66) մեզ, Բ:

(67) ի յետ, Բ:

(68) եւ զվաստակ, Բ:

(69) ի պաշտամարանն, Գ:

(70) Կարապետ Եպս. կը ծանօթագրէ. «Հ»

2261 — 2244. ձեռագրում շարունակութիւնը բոլորովին տարբեր է. «այս բաղուլ յայնժամ զհոգաբաւալ մարմնոյ աշխատութեան, եւ համարէն ամենեցուն յարութեամբն ի դատաւարանին տեղի Կասանի»: Եկեղեցւոյ պաշտօնեաների դատարարութեանց մասին ամենեւին խօսք չի լինում այստեղ» (Շողակաբ, էջ 135):

(71) հարիւր եւ, Ա:

(72) եւ ոչ հանգիստ իրանա[ն]ց, Ձուր Բ:

(73) եւ տեղի ... Յակովբայ, Ձուր Բ:

(74) արինակաւ, Ա:

(75) զայս մեզ առուիկա սաղմոսիս ուսուցանէ, Ա:

(76) եկեղեցւո, Բ:

(77) Սողոմոնիմ, Ա:

(78) նախ, Բ:

կառավարող և կէսք սարկաւազացն և զբարակարգացք և սաղմոսասացք⁽⁷⁹⁾ և այլ պաշտաւեայք, խոնարհագոյն⁽⁸⁰⁾ մի թան զմի, ահա այս բոս փերին անմարմնական զատուցն երկնային զօրացն և թն տեսանին մեզ⁽⁸¹⁾ որոշեալ պաշտաւեայք՝ բոս Բարսղի և Գրիգորի եղբարցն, որոց և պիտկոսոսացն հարցաքննական վարդապետութեանն վասն երկնայնոցն:

Իսկ արանց և կանանց կարգ զատուցեալ յեկեղեցւոյ, այս⁽⁸²⁾ բոս սաղմոսին արդարեւ որոցն ցնծալով ցնծայն, որք արժանացեալք երկնաւոր մտիցն կայանի, այս է եկեղեցւոյ, ցնծան ուրախացեալք յաստուածային պատգամացն ցնծութեանց: Եւ ահա այսոքիկ ի նոսին յաւելեալք, ինն թրւին զատուցեալ դասք, բոս Դիոնէսիոսի Արիսպագացւոյ վարդապետութեանն, որ ի հրեշտակն խաւսիցի⁽⁸³⁾: Եւ զի բոս նոսին

թուոց ևն պաշտաւեայք եկեղեցւոյ, սուրբն Գրիգոր ի տեսլեանն⁽⁸⁴⁾ ասէ զմկրտելոցն եթէ խառնեցան ի զօրս լուսեղէնս. և ինքն ի վարդապետութեանն ասէ, թէ փոխանակ հրեշտակացն, որ կործանեցան յաստուածակիր սպասաւորութենէն, որդիք մարդկան հրեշտակացին և կայցեն զնոցս տեղի. զի թիւք կարգեալք փառաւորութեանցն անխախտ պահեալք լիութեամբն, ուստի ի հասարակաց համեմատութենէ⁽⁸⁵⁾ անտի զովեոտքն աճեցեալ զաւրացին: Հասարակաց ասելով⁽⁸⁶⁾ համեմատութիւնն՝ եցոյց, թէ ընդ ամենայն լուսեղէնն խառնեալ դասս երամանան:

Եւ զի երկնից աւրինակ է եկեղեցի յերկրի, սակս այնորիկ զնոյն դասակցութիւնս ցուցանէ մեզ Տէր, իւրոց պաշտաւեայիցն թուով⁽⁸⁷⁾, որում փառք յախտեանս⁽⁸⁸⁾:

Հրատ. Ն. ԵՊՍ. ՆՈՎԱԿԱՆ

(79) սաղմոսացքն, Բ:

(80) խորհրդագոյնք, Բ:

(81) զմեզ, Ա:

(82) այս, Չուր Լ:

(83) Դիոնիսեայ Արիսպագացւոյ ի հրեշտակն թուով, Բ:

խաւսից, Բ:

(84) ի տեսլեանն, Չուր Բ:

(85) Տես, Ագաթանգեղոս, Հտ. ԶԳ. էջ 472:

(86) ալիով (?), Բ:

(87) ցուցանէ մեզ իւրոց պաշտաւեայիցս Տէր

թուով, Բ:

(88) որում փառք յախտեանս, Չուր Բ: